ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Զարա Ասլանյան, Երիտասարդության հարցերի վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.

Հունգարիա, Բուդապեշտ քաղաք, 23.03.2026-25.03.2026

2. Հրավիրող կողմը.

ԵԽ երիտասարդության հարցերի վարչություն,

3. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEJ) հերթական 77-րդ նիստը և Երիտասարդության հարցերով համատեղ խորհրդի (CMJ) 54-րդ հանդիպումը:

4. Քննարկված թեմաներն էին.

1. Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով պատասխանատու նախարարների համաժողովի ամփոփում, նշված առաջնահերթությունների ներկայացում
2. Եվրոպական երիտասարդական աշխատանքի 4-րդ կոնվենցիայի համաժողովի արդյունքների ներկայացում, առաջնահերթությունների ներկայացում
3. 2026-2027 թթ. համար Երիտասարդության ծրագրային կոմիտեի վերջին 8-րդ անդամի ընտրություն
4. ընտրական իրավունքի նվազագույն տարիքը նվազեցրած երկրների փորձի ուսումնասիրությունը, ճանախարհային քարտեզի մշակում,
5. Սևծովյան տարածաշրջանում Եվրոպական երիտասարդական կենտրոնի երրորդ հարթակի ստեղծման նպատակով երկրների ուսումնասիրության ճանախարհային քարտեզի մշակում,
6. «Երիտասարդների համար, նրանց հետ և երիտասարդների կողմից խաղաղության կրթության» նախագծի համաձայնեցում
7. ԵԽ երիտասարդական կենտրոնի որակի պիտակի շնորհամ նպատակով 3 երկրներում երիտասարդական կենտրոնների ուսումնասիրության արդյունքների ներկայացում,

8. Եվրոպական Երիտասարդական հիմնադրամի նոր ձևաչափով իրականացվող աշխատանքների ներկայացում:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման ընթացքում քննարկվեց Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով պատասխանատու նախարարների 10-րդ համաժողովի արդյունքների հետագա միջոցառումները, դրանցից են՝ Սևծովյան տարածաշրջանում Եվրոպական երիտասարդական կենտրոնի երրորդ հարթակի ստեղծման, ընտրական իրավունքի նվազագույն տարիքը նվազեցրած երկրների փորձի ուսումնասիրության իրականացման համար ճանապարհային քարտեզի մշակման առաջարկ, աշխատանքային խմբերի ստեղծման անհրաժեշտությունը:

Հաջորդիվ ներկայացվեց Եվրոպական երիտասարդական աշխատանքի 4-րդ կոնվենցիայից համաժողովի արդյունքներում շեշտադրված առաջնահերթությունները, որոնցից կարևորվել է հետևյալը՝ երիտասարդական աշխատանքի համակարգերը, երիտասարդական աշխատանքի միջավայրը, երիտասարդական աշխատանքի բնութագիրը: Հայաստանը ներառվել է ԵՄ-ԵԽ երիտասարդական աշխատանքի վերաբերյալ աշխատանքային խմբում, որտեղ անդամ են նաև Իտալիայի, Իռլանդիային, Բուլղարիայի Հանրապետության ներկայացուցիչները: Խմբի նպատակն է մասնակցելու երիտասարդական աշխատանքին վերաբերյալ մշակվող փաստաթղթերին:

Իրականացավ 2026-2027 թթ. համար Երիտասարդության ծրագրային կոմիտեի վերջին 8-րդ անդամի ընտրությունը, որին թեկնածություն էին ներկայացրել Հայաստանի Հանրապետությունը, Սերբիայի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը: Ընտրությանը մասնակցեցին Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի 77-րդ նիստի անդամները և արդյունքում ընտրվեց Սերբիայի ներկայացուցիչը:

ԵԽ երիտասարդության հարցերի վարչության պետի կողմից ներկայացվեց՝

1. Հաշվետվություն 2025 թ. իրականացված աշխատանքների վերաբերյալ,
2. 2026-2027թ. վարչության կողմից նախատեսվող ծրագրերի նախապատրաստական աշխատանքները՝ Երիտասարդական ֆորում, ոչ ֆորմալ գործիքակազմով դասընթացներ:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Երիտասարդության հարցերով համատեղ խորհրդի քննակմանը ներկայացվեց «Երիտասարդների համար, նրանց հետ և երիտասարդների կողմից խաղաղության

կրթության» նախագծը, որին ՀՀ և տարբեր երկներ ներկայացրել են փոփոխություններ, առաջարկություններ: Հայաստանի առաջարկը կապված երիտասարդների շրջանում հոգեկան առողջության ներառումը անվտանգության, պաշտպանության և ամբողջական բարեկեցության շարքում ընդունվել էր: Ներկայումս նոր փոփոխված տարբերակը ուղարկվել է Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի բոլոր անդամներին վերջնական համաձայնությանը, որի ժամկետն է ապրիլի 15-ն է:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԵԽ երիտասարդության հարցերի վարչության ներկայացուցիչների հետ կայացավ ոչ ֆորմալ հանդիպում, որի ընթացքում խոսվեց Հայաստան-Եվրոպայի խորհուրդ 2027-2030թ.թ. մշակող գործողությունների ծրագրի մասին և առաջարկվեց դիտարկել երիտասարդությանը վերաբերող միջոցառումների ներառումը այդ փաստաթղթում:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

27.03.2026թ